Գիւղացի մը, որ արտեր ու ջաղացքներ ունէր և գիւղացիներուն մէջ բախտաւոր ու հարուստ մէկն էր, իր յաջողութիւնը կը պարտէր այն սեւ օձին, որ իր տան մէջ կը բնակէր։ Մէկ հատիկ զաւակ մը կ'ունենայ այս գիւղացին, և որովհետեւ օձը սովոր էր տան մէջ համարձակ շրջելու, երախան օր մը օձին հետ խաղալով՝ անոր պոչը իր ափին մէջ սաստիկ կը ճզմէ։ Որքան կը ջանայ օձը՝ կարող չ'ըլլար իր պոչը ազատելու տղուն ձեռքէն։ Ձարը հատած՝ կը խայթէ տղուն թաթիկը։ Տղան կը թողու պոչը, ու կը թունաւորուի միանգամայն։ Օձը վախէն կը փախչի ու տան մէկ անկիւնը կը կծկուի։ Քանի մը ժամ վերջը տղան կը մեռնի։

Տղուն հայրը սաստիկ կսկիծէն ուրագը կ'առնէ և օձին կը զարնէ, օձին պոչը կը կտրի և օձը իր գլուխն ու մնացեալ մարմինը առած կը փախչի տունէն ու գիւղէն դուրս քարերու մէջ կ'ապրի։ Օրեր կ'անցնին, բայց հետզհետէ այդ գիւղացիին բախտը կ'աւրուի։ Օր մը իր կնոջը հետ կը մտածեն. «Երթանք մեր օձը նորէն մեր տունը հրաւիրենք, որպէսզի մեր բախտը վերադառնայ»։ Եւ կ'երթան քարերու մէջէն կը կանչեն իրենց օձը։ Ան պատասխան կու տայ. «Ինչպէս ձեզ՝ ինձ նոյնպէս փափագելի է այդ, բայց ա՛լ անկարելի է։ Քանի դուք ձեր զաւակին մահը յիշէք և ես ալ իմ պոչը, իրարու հետ չենք կրնար համերաշխ ապրիլ»։

ԱՆՃԱՐԱԿ ԲՈՒՆ

Բուն գիշերային կենդանի մըն է ու ցերեկները չի կրնար տեսնել։ Այդ պատճառաւ ցերեկները միշտ կը քնանար ու գիշերներն ալ որսի կ'ելլէր։

Ան կ'որսար թռչնիկներ ու փոքր կենդանիներ, ինչպէս՝ մկնիկներ, նապաստակներ ու միջատներ։

Այսպէս՝ մկնիկը, նապաստակն ու թռչնիկը չատ կը վախնային չար բուէն. ան կ'ուզէր որսալ և ուտել իրենց ձագուկները։ Օր մրն ալ իրարու քով գալով կը խորհին ճար մը գտնել, ազատելու համար չար բուէն։

—Շատ կը վախնամ բուէն, կ'ըսէ թռչնիկը. անցեալ օր իմ ձագուկներէս մէկը կերաւ, քիչ մնաց միւսներն ալ պիտի ուտէր։ Մենք չենք կրնար անոր բան մը ընել, երթանք նապաստակ եղբօր, տեսնենք ան ի՞նչ կ'ըսէ։

Նապաստակը երբ կ'իմանայ թռչնիկին ու մկնիկին գանգատները, կը պատասխանէ.

—Շիտակը ես ալ դժգոհ եմ այդ չար բուէն. իմ ձագուկներս ալ ուտել կ'ուզէ։ Ես միայն լաւ վազել գիտեմ, անոր բան մը չեմ կրնար ընել. եկէք աղուէս եղբօր երթանք, ան կրնայ պատժել չար բուն։

Աղուէսը կը խոստանայ օգնել իրենց, եթէ իրեն համար գեղեցիկ տնակ մը չինեն։

Անոնք անմիջապէս աղուէսին համար փոքրիկ, սակայն ծառերով ու ծաղիկներով չրջապատուած չատ գեղեցիկ տնակ մը կը չինեն։

Այն ատեն աղուէս եղբայրը կ'երթայ բուին քով ու կ'ըսէ.

—Բու եղբայր, իմացայ թէ դուն թռչնիկներուն ու մկնիկներուն միսը չատ կը սիրես։ Ես տեղ մը գիտեմ, ուր չատ մը մկնիկներ ու թռչնիկներ պահուըտած են, եկուր քեզ հոն տանիմ։

Բուն չատ կ'ուրախանայ ու կը խոստանայ լաւ նուէր մը տալ, եթէ իրեն ցոյց տայ այդ տեղը։

Աղուէսը անմիջապէս կ'երթայ ու կը գտնէ նապաստակը, մկնիկն ու թռչնիկը ու կը պատուիրէ որ խոշոր մեղրադդում մը և պարան մը ճարեն։ Անոնք դիւրութեամբ կը գտնեն

պէտք եղած մեծութեամբ դդում մը ու մեջտեղէն կը կտրեն, մէջը լաւ մը փորելէ վերջը կու տան աղուէսին, որը թակարդ մը կը լարէ դդումին մէջ։ Ցետոյ կ'երթայ ու կ'ըսէ բուին.

—Ես քեզի նշան պիտի տամ, ու դուն ալ դդումի մէջ պիտի մտնես, ուր պահուըտած են կենդանիները։

Անճարակ բուն հաւատալով աղուէսին խօսքերուն, կը մտնէ դդումին մէջ։ Աղուէսը կը քաշէ պարանը, դդումը կը գոցուի ու չար բուն կը բանտարկուի դդումին մէջը։

ԾԱՌԵՐՆ ՈՒ ԵՂԵԳԸ

Թագաւոր մը զբօսանքի ելաւ չըլելու լեռներուն ու հովիտներուն մէջ։ Եւ տեսաւ, որ մեծամեծ ծառեր կային ամէն տեղ գետին ինկած՝ կոտրտուած և փչրուած։ Եւ միայն եղեգ մը կար, որ դեռ կանգուն և անարատ կանգնած էր։

—Ո՛վ եղեգ, ըսէ՝ ինծի, թէ ինչպէս այսպէս հաստատուն մնացած ես, երբ մեծամեծ ծառերը փչրուած են և կործանած։ Եւ եղեգն ըսաւ.

—Ո՛վ թագաւոր, երբ սաստիկ հով բարձրացաւ, ծառերը հպարտօրէն հակառակ կանգնեցան անոր դէմ, և հովը զանոնք փչրեց։ Իսկ ես խոնարհեցայ հովին առջեւ և ահա կանգուն եմ։

Adaptation from *Վ. Այգեկցի*

ԻՇԽԱՆԸ ԵՒ ԱՁՐԻ ԿԻՆԸ

Քաղաքի մը մէջ իշխան մը կար, խիստ չար ու անիրաւ։ Նոյն քաղաքին մէջ կ'ապրէր այրի կին մը որմէ իշխանը բարձր հարկեր պահանջելով չատ կը նեղէր։ Բայց այրի կինը, որքան ալ որ իշխանը չար էր ու անսիրտ, միշտ կ'աղօթէր իշխանին համար՝ մաղթելով անոր խաղաղ ու երկար կեանք։ Մարդիկ գացին և պատմեցին իշխանին, թէ այս կինը միշտ կ'աղօթէ իրեն համար։ Իշխանը գնաց այդ կնոջ մօտ ու ըսաւ.

—Ես քեզի բարիք չեմ ըրած, ո՛վ կին, դուն ինչու՞ ինծի համար կ'աղօթես ու երկար կեանք կը մաղթես»։

Այրի կինը պատասխանեց.

—Քու հայրդ վատ մարդ էր. ես անիծեցի, և ան մեռաւ։ Դուն նստեցար անոր տեղը՝ աւելի խիստ և դաժան։ Հիմա կը վախնամ, որ եթէ մեռնիս քու որդիդ քեզմէ աւելի չար ըլլայ»։

Adaptation from *Վ. Այգեկցի*

ԱՁՐԻ ԿԻՆՆ ՈՒ ՈՐԴԻՆ

Այրի կին մը ուներ տասը այծ ու որդի մը։ Ամէն օր տղան այծերը արածելու կը տանէր, իսկ մայրը կաթին կը խառնէր չերեփ մը ջուր եւ կը ծախէր դրացիներուն։ Անգամ մը որդին մօրը հարցուց, թէ ինչո՞ւ ջուր կը խառնէր կաթին մէջ։ Եւ մայրը պատասխանեց.

—Որդի՛, մեր կաթը քիչ է, ջուր կը խառնեմ, որպէսզի կաթը չատանայ, եւ մենք ձմեռը պանիր ունենանք։

Օր մըն ալ, երբ որդին այծերը նորէն արածելու տարած էր, անձրեւ եկաւ, հեղեղի վերածուեցաւ եւ այծերը քշեց տարաւ, լեցուց գետը։ Որդին այդ օրը, արեւը մայրը չմտած, կանուխ եկաւ տուն։ Մայրը հարցուց.

—Որդի՛, ո՞ւր են այծերը, ինչո՞ւ այսպէս կանուխ տուն եկար։

Որդին ըսաւ.

—Մայրի՛կ, այն չերեփ մը ջուրը, որ դուն կը խառնէիր կաթին եւ կը ծախէիր դրացիներուն, հաւաքուեցաւ, հաւաքուեցաւ ու հեղեղ դառնալով՝ եկաւ մեր այծերը լեցուց գետը։

ԳԱՅԼՆ ՈՒ ԻՐ ՁԱԳԵՐԸ

Մայր գայլը ետեւը ձգած էր իր ձագերը և չարունակ կը բարկանար ու կը խածնէր զանոնք։ Ձագերը նեղացան և իրենց ակռաները կճռտելով ըսին.

—Դուն մեզ չես սիրեր։ Դուն մեզ կը չարչարես։ Դուն քար սիրտ ունիս։

Մայրը ձայն չհանեց։

Ցանկարծ լսուեցաւ չան հալոց, յետոյ ձիու խրխինջ։ Հեռուէն երեւաց ձիաւոր որսորդ մը։

—Սու՛ս, — ըսաւ մայր գայլը իր ձագերուն, — ձայն չհանէք. պառկեցէ՛ք գետինը և գլուխնիդ չբարձրացնէք խոտերէն վեր։

Ձագերը իսկոյն պառկեցան գետինը, իսկ մայր գայլը արագ սկսաւ վազել դաշտին մէջէն։

Շուները տեսան գայլին փախուստը և ինկան անոր ետեւէն։ Որսորդն ալ ձին քշեց շուներուն կողմը։

Ձագերը նայեցան իրենց թագստոցէն և ըսին իրարու.

—Ահա թէ ինչ տեսակ մայր ունինք. մեզ ձգեց անտէր ու անտիրական և ինք փախաւ՝ վտանգէն ազատելու համար։

Մութը կոխած էր արդէն, երբ մայր գայլը վերադարձաւ ձագերուն մօտ։ Վիրաւորուած էր, ուսն ու վիզը՝ արիւնաթաթախ։

Դէ՛հ, տուն երթանք, — ըսաւ մայրը, — երբ դուք ալ օր մը ձագեր ունենաք, ինծի պէս ըրէք. շուներն ու որսորդները ձեր ետեւէն վազցուցէ՛ք, որպէսզի ազատին ձեր ձագերը։ Տեսէ՛ք, ես այսօր այդպէս ըրի։

ՎԱԽԿՈՐՏ ԸՆԿԵՐԸ

Երկու ընկեր, Գրիգոր ու Սմբատ, անտառին մէջէն կ'անցնէին։ Ցանկարծ տեսան արջ մը, որ կու գար դէպի իրենց կողմը։

Գրիգոր չուտ մը բարձրացաւ ծառի մը վրայ։ Սմբատ չկրցաւ ծառը ելլել և մնաց վարը։ Արջը չուտով մօտեցաւ։ Սմբատ յիշեց, որ արջը մեռած մարդու չի դպիր և գետինը պառկեցաւ, շունչը պահեց ու մնաց անշարժ։

Արջը եկաւ, Սմբատին մօտեցաւ, հոտուրտաց և ձգեց ու հեռացաւ։ Այն ատեն Գրիգոր վար իջաւ և հարցուց.

—Տեսայ, որ արջը ականջիդ բան մը փսփսաց. ի՞նչ ըսաւ։

—Արջը ըսաւ, որ երբեք այլևս այդպիսի վախկոտ ընկերոջ հետ տեղ չերթամ։

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԸ

Մեծահասրուստ մարդ մը, որ չատ կը ճանճրանար, կանչեց նշանաւոր բժիշկներ և դարման մը խնդրեց անոնցմէ իր անբուժելի ախտին։ Գիտնականները միաձայն յայտարարեցին, թէ բախտաւոր մարդու մը շապիկը պէտք էր գինքը բուժելու համար։ Հիւանդը սպասաւորներ ղրկեց ամէն կողմ որ փնտռեն, գտնեն և վայրկենապէս բերեն այդ հրաշագործ շապիկը։ բայց ամէնքն ալ ձեռնունայն և յուսահատ վերադարձան։ Մէկ բախտաւոր գիւղացի մը միայն գտեր էին, ան ալ շապիկ չունէր։

ՄՏԱՑԻՐ ԳԻՏՈՒՆԸ

Մեծ գիտուն մը իր բարեկամներէն մէկուն այցելութեան գացեր էր։ տուն դարձած ատեն նչմարեց որ իր ոսկի ծխատուփը քովը չէր։ կարծեց թէ իր բարեկամին տունը ձգած էր զայն, ու հետեւեալ տոմսակը գրեց անոր։ «Սիրելի բարեկամ, կարծեմ թէ ծխատուփս ձեր տունը մոռցած եմ։ հաճեցէ՛ք գտնել զայն եւ գրաբերիս հետ ղրկել ինծի։» Բայց պահարանը գոցելու պահուն, գրպանին մէջ ծանր բան մը զգաց, փնտռեց և գտաւ։ «Վա՛յ, հոս է եղեր, աղաղակեց։ է՛յ, աւելի աղէկ,» և նամակը բանալով, հետեւեալ յետգրութիւնը աւելցուց։ «փնտռելու նեղութիւն մի՛ կրէք։ ծխատուփս գտայ։» Ցետոյ նամակը նորէն ծակեց ու իր բարեկամին ղրկեց զայն։

ՆԱԻԱՍՏԻՆ

Նաւաստի մը կը մեկնէր
Հեռո՛ւ, հեռո՛ւ երկիրներ։
—Կ՛երթաս, — ըսաւ մէկն իրեն, —
Բայց չե՞ս վախնար ծովերէն։
Հայրդ, մեծ հայրդ ալ գացին
Ու զոհ եղան արկածին։
—Իսկ քու մեծ հայրդ ո՞ւր մեռաւ
—Իր անկողնին մէջ, հարկաւ
—Հապա այնտեղ դուն ի՞նչպէս
Ամէն գիշեր կը նիրհես։

ՄԱՀԸ

Եթէ ես աչխարհի տէրը ըլլայի, կը հրամայէի ոչնչացնել այն բոլոր բաները, որոնք մարդու գիտակցութիւնը կը զարգացնեն։ Որովհետեւ ամէն մէկ քայլ, որ կը տանի դէպի զարգացում, տառապանքի նոր դուռ մը կը բանայ մարդուն համար։ Գիտութիւնը կրնայ անոր մէջ արթնցնել անկուշտ հարցասիրութիւն մը, որուն առջեւ ինքն իսկ անզօր կը մնայ։ Մարդուն ուղեղը հեքեաթի այն քնացած հսկան է, որ արթննալուն պէս անօթութիւն կը զգայ, եւ որքան ուտէ՝ այնքան աւելի կը պահանջէ։ Ուրեմն, քանի անկարելի է զայն կշտացնել, աւելի լաւ չէ՞ ձգել գինքը հանգիստ քունի մէջ։

Երբ մարդ անօթի է, հաց կը պահանջէ։ բայց երբ կշտանայ՝ հարց կու տայ, թէ ինչո՞ւ կ՛ապրի։ Ես կ՛ուզէի, որ ոչ մէկ անօթի մնար աչխարհի վրայ։ այն ատեն ամէն մարդ կը

համոզուէր, որ ի զուր կ'ապրի։ Եւ կու գամ զարմանալի եզրակացութեան մը. արդեօք անօթիները չե՞ն, որ պատճառ կ'ըլլան մարդկութեան կեանքի յարատեւութեան։

Լաւատեսներդ վախկոտ էք, եւ իբր վախկոտ՝ խաբեբայ էք։ Դուք կը խաբէք թէ՛ ձեզ եւ թէ՛ ուրիշները։ Դուք համարձակութիւն չունիք չիտակ նայելու միակ բացարձակ ճշմարտութեան՝ մահուան երեսին։ Ձեր ամբողջ վարդապետութիւնը հիմնուած է կեղծիքի եւ ինքնախաբէութեան վրայ։ Դուք սուտ կը խօսիք, երբ կ'ուզէք փաստել, թէ ապրիլը յիմարութիւն չէ։ Կեանքին նուիրուած երգերու մէջ դուք կը փորձէք չլսել մահուան ճիչը, որ կը սարսափեցնէ ձեզ։ Դուք էք, որ մէջտեղ նետած էք գոյութեան կռիւը, որպէսզի փախչիք մահէն։ Դուք չրջապատած էք ձեզ սիրոյ, ատելութեան, կիրքի եւ նախանձի բոլոր պատրանքներով, որպէսզի անոնց մշուշին մէջ չտեսնէք մահուան փոսին անսահման խորութիւնը։ Ձեզի ծանօթ չէ յոռետեսին հպարտ արհամարհանքը, որուն առջեւ կ'ոչնչանայ ամէն բան։

Քանի մը վայրկեան ետք, ես այլեւս չեմ ըլլար։ Ուրիշ խօսքով, կ'ըլլամ ապագայ անգոյութեան մէջ։ Ինկած՝ սենեակի կեդրոնին, գանկս փչրուած։ Մայրս — խե՛ղճ պառաւ — կը սկսի վրաս լալ. սենեակը լեցուն կ'ըլլայ ոստիկաններով, հետաքրքիրներով։ Կ'ուզէի մեռած ատենս ալ տեսնել՝ դիտելու համար այդ յիմար մարդոց իրարանցումը, որ կուշտ մը խնդայի անոնց վրայ։

Ես կը մեռնիմ խղճալով ձեզի, կեանքի ստրուկներ, որովհետեւ, որքան ալ ուզէք ապրիլ, ի վերջոյ պիտի գաք իմ ետեւէս։

Adaptation from *Նար Դոս (Միքայէլ Ծովհաննէսեան)*

ԱՇՈՒՆ

Աշուն է։ Արեւը կանուխ մայր կը մտնէ, օրերը կը կարճնան և գիշերները կ'երկարին։ Արեւը այլեւս չի տաքցներ այնպէս, ինչպէս ամառը։ Երկինքը յաճախ ամպոտ է, պաղ հով կը փչէ և անձրեւ կու գայ։ Ծառերու տերեւները կը փոխեն իրենց գոյնը եւ կը դառնան գոյնզգոյն. դեղին, սրճագոյն, կարմիր, ոսկեգոյն և նարնջագոյն։ Կարծես թէ մէկը ներկեր է զանոնք։ Տերեւները կը թափին ամենուր։ Օր մըն ալ բոլոր ծառերը կը մերկանան։ Մարդիկ կը պատրաստուին ձմեռը ընդունելու, ձմեռը իր լաւ ու վատ կողմերով։ Գարունն իր ծաղիկներով և թռչուններով հեռու է, բայց ան ալ իր ժամանակին պիտի գայ։

ՋՈՒՐԸ

Ջուրը չատ օգտակար հեղուկ մըն է. ան ծարաւը կանցընէ, ամէն ինչ կը մաքրէ, հողը կը ջրէ և պտղաբեր կը դարձնէ, կրակը կը մարէ...

Երբ ջուրը սառի, սառոյց կը դառնայ, իսկ երբ տաքնայ, չոգի կ'ըլլայ։

Ամպը, գոլորշին, մառախուղը, անձրեւը, ձիւնը, կարկուտը, սառոյցը, չոգին և ցօղը ջուր են։

Ջուրերը հաւաքուելով կը կազմեն աղբիւր, առու, վտակ, գետ, լիճ, ծով, ովկիանոս։

Եթէ ջուր չըլլայ, մարդիկ և բոյսեր չեն ապրիր, իսկ երբ չատ ըլլայ՝ գետերը յորդելով մեծ վնաս կու տան մարդոց։

ՀԱՑ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՑՈՒՆ . . .
Մուշեղ Իշխան

Հայ լեզուն տունն է հայուն աչխարհիս չորս ծագերուն,
Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ,
կը ստանայ սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն,
եւ բորանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ազատ։

Քանի՛ դարեր և քանի՛ ճարտարապետ հանճարներ
Աչխատեցան անոր տալ վեհութիւն, գեղ ու պերճանք,
Քանի՛ գեղջուկ բանուորներ տքնեցան տիւ եւ գիշեր,
Որոնք թաղուած են հիմա մոռացութեան մութին տակ։

Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեւէ դարէ դար,
Իր ճրագները՝ միշտ լոյս, իր օճախին հուրը՝ վա՛ռ,
Բարիքներով անսպառ լեցուն ամբարն ու մառան։

Հո՛ն է միայն, որ կրնայ գտնել ամէն հայ կրկին
Խաժամուժին մէջ օտար կորսնցուցած իր հոգին,
Անցեալն անհուն եւ ներկան, նոյնիսկ մթի՛ն ապագան . . . ։

ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐ
Վահան Թէքէեան

Հաչուեյարդար· ի՞նչ մնաց, կեանքէն ինծի ի՞նչ մնաց,
Ինչ որ տուի ուրիչին, տարօրինա՛կ, այն միայն,
Խանդաղատանք մը ծածուկ, օրհնութիւններ անիմաց,
Երբեմն հատնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն։

Ինչ որ գնաց ուրիչին, վերադարձաւ անուշցած
Ու զօրացած՝ հոգիիս մէջ մնալու յաւիտեան,
Ինչ որ տարաւ սէրն ինձմէ չկորսնցուց զայն Աստուած,
Տուաւ ինձ ետ ու ըրաւ անով իմ կեանքս բուրեան։

Եւ այժմ, ո՛վ Տէր, հակառակ տառապանքին, հակառակ
Ինծի համար ալ չորցած երջանկութեան աղբիւրին,
Հին գինիով յորդաբուխ ես կ՚արբենամ տակաւին։

Ու չեմ ըսեր· «Ի՛նչ մնաց»։ Ի՛նչ կը մնայ հողին տակ
Եղեգներէն դիւրաթեք, կաղնիներէն հաստաբուն,
Արեւն ըմպած ըլլալու մխիթարանքը անհուն։

ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ
Միսաք Մեծարենց

Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,
Հոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,
Ի՛նչ հեչտին է մթնշաղն այս սատափէ։

Աքասիաները, գինով լոյսէ ու տապէ
Օրօրուելով մաքուր չունչ մը կը հեւան,
Մինչ կը ճիւնէ ծաղկն իրենց հոտեւան.
Որ խօլաբար հովը գրկել կը չտապէ։

Ու լոյսն անոնց, անխօս հուրի՛ դիւթական,
Հմայագեղ ու վարսերով արծաթէ,
Շատրուանին կ'իջնէ գուռին մէջ կաթէ։

Ջուրը ցայտքէն ծաղիկ-ծաղիկ կը կաթէ,
Վճիտ, ինչպէս լոյսէ արցունքը մանկան,
Նուագն անոր կը հեծեծէ հեչտական։

Ծաղիկներէն հովը թերթեր կը թափէ ... ։

ՏՐՏՈՒՆՋԻ
Պետրոս Դուրեան

Է՛հ, մնաք բարով, Աստուած ու արեւ,
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերեւ։
Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից։
Աստղերն ի՞նչ են որ, եթէ ոչ անբիծ
Ու թշուառ հոգուոց անէծք ողբագին
Որք թռուին այրել ճակատն երկնքին։
Այլ այն Աստծոյն՝ չանթերու արմատ՝
Ցաւելուլ զէնքերն ու զարդերը հրատ ...
Այլ ո՛հ, ի՛նչ կ'ըսեմ, չանթահարէ՛ զիս,
Աստուած, խոկն հսկայ, փչրէ հիւլէիս,
Որ ժպրհի ճգտիլ սուզիլ խորն երկնի
Ելնել աստղերու սանդուխն ահալի։

Ողջո՛յն քեզ, Աստուած, դողդոջ էակին,
Շողին՝ փթիթին՝ ալւոյն ու վանկին.
Դուն, որ ճակատիս վարդն ու բոցն աչերուս
Խլեցիր թրթռումն չրթանցս, թռիչքն հոգւոյս,
Ամպ տուիր աչացս, հեւք տուիր սրտիս,

Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս։
Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
կեանք մ'անհուն չողի, բոյրի, աղօթքի,
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ չունչ
Հոս մառախուղի մէջ յամր, անչչունջ,
Այժմէն թող որ չանթ մ'ըլլամ դալկահար,
Պլլուիմ անուանդ, մռնչեմ անդադար,
Թող անէծք մ'ըլլամ ու կողդ խրիմ,
Թող յորջորջեմ քեզ՝ «Աստուած Ոխերիմ»։

ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԻՆ
Դանիէլ Վարուժան

Կ'ուզեմ ըլլալ քու մարմարիոնդ պեղուած
Ոլիմպոսի ամենէն խոր արգանդէն,
Եւ իմ մուրճիս տակ ըղգենու հրեղէն
Միս մը կնոջ, լոյսով, տենդով սրարբած։

Աչքերդ ըլլան վիհեր ուր մարդ երբ սուզի,
Ցաւէտին մէջ անմահացած զգայ զինք։
Գիծերդ անեղծ ըլլան, ըլլան քու ստինք
Դաշնակութիւն մ'ուր կենսահիւթը յուզի

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգւոյն պէս
Եւ հեթանոս այդ մերկութեանդ ներքեւ
Տառապի մարդն, ու չկրնայ դպչիլ քեզ։

Թէ հարկ ըլլայ զոհ մը ընել քեզ պարգեւ,
Բազինիդ ե'ս պիտի ուզեմ մորթուիլ։
Որպէսզի կուճդ ըմպէ արեանս հուսկ կաթիլ։

ԿԻՐԱԿՄՈՒՏՔ
Միսաք Մեծարենց

Ցուչիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զուարթ . . .
Ոսկի թելեր՝ պլլուած խունկի թաւիշ մչուչին.
Կապոյտ ծոպեր, ծիածան, ծփուն ձայներ, միստիք վարդ,
Լուսէ արցունք մոմերու, որոնք հանդարտ կը մաշին։

Խունկի ծարաւ իմ հոգիս կը ծրծէ պահն այս հանդարտ,
Ոսկեկրակ աչքերով բուրվառներն երբ կը ճօճին.
Պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու զիս անթարթ,
Կը զգամ համբոյրն՝ իմ հոգիս պարուրող բիլ մարմաչին։

Մեղեսիկի երանգներ կ'օծեն պարոյրը խունկին.
Խորհուրդին եմ ծնրադիր բազուկներըս խաչանիշ՝
Ու կը սպասեմ, որ ծագի հոգւոյս պայծառ կիրակին . . . :

Ջահերն հիմակ կ'երազե՛ն համակ զմրուխտ ու թարչիչ . . .
Կամարներէն, խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ,
Հոգիս քիչ քիչ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ:

Ցուչիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զուարթ . . . :

ԴԱՍՏԻԱՐԱԿ
Դանիէլ Վարուժան

Դաստիարակն է: – կը խօսի ծանր, յստակ.
Ջայնն աստղերէն, լոյսէն կու գայ,
Բառը կ'ելլէ, թռիչներուն վրայ հուր կայ.
Ջայն կ'արձակեն իրենց բոյնէն գիրքն ու կեանք:

Թոք կը սպառէ, միտք կը լլկէ, չունչ կու տայ,
Եւ չի խորհիր իր վէրքերուն.
Մանկութեան մէջ դրած ամբողջ ծերութիւնն՝
Կը բաժնէ ծովը բազում լճի վրայ ...

Վսեմ կոչում: Հոգեականերու մը հլու,
Ջգուշաւոր հպումներով՝
Կը գրէ գուրթն էջերու վրայ ապահով.
Կը ցանէ սէրն՝ անձնուիրութիւն քաղելու:

Անոնց կոկոն ուղեղին մէջ կիսաբաց
Կը զետեղէ ճառագայթները,
Եւ կը լեցնէ խաւերն անոր՝ բարեբեր
Իր գիտութիւնն Աստծոյ մէջ ամփոփած:

Եւ հաւաքած ամանին չուրջն իր սրտին
Մանկան չրթներ՝ որք կը ծծեն,
Կը բաշխէ, հեզ, անոնց արիւն արիւնէն. –
Այդ իր կեանքն է՝ որ կ'անցընէ ուրիշին:

Եւ այսպէս օր մ'երբոր ըլլայ զոհ մը ծեր,
Մեռնելու մօտ և հոգեվարք,
Պիտ՝ մնայ լոկ անոր այս մեծ մխիթարանք՝
Թէ իր կեանքն իր սաներուն մէջ կ'ապրի՛ դեռ:

ՀԱՑՈՒ ՀՈԳԻՆ

Վահան Թէքէեան

Ի՞նչ է Հոգին, Հայո՛ւ Հոգին՝ հարցուցի մերթ ինքզինքիս
Եւ մերթ լացաւ ու մերթ խնդաց իմ հոգիս,
Անյո՛յս լացաւ եւ յոյսերով խօլարշաւ,
Մրրկաթեւ մինչեւ ի փա՛ռք խոյացաւ . . . ,
Որմէ յետոյ նորէն ըսի տխրագին՝
Ի՞նչ է Հոգին, Հայո՛ւ Հոգին . . . :

Ի՞նչ է Հոգին, Հայո՛ւ Հոգին՝ ինքզինքիս դեռ հարցուցի
Եւ ինչպէս ամպ մը երեւցաւ ան ինծի՝
Որ կ՚իջնէ վար ու մառախուղ կ՚ըլլայ մերթ
Եւ մերթ ճերմակ ու վարդագոյն՝ թերթ առ թերթ
կը տարածուի երեսն ամբողջ երկինքին,
Անհո՛ւն Հոգին, Հայո՛ւ Հոգին . . . :

Ի՞նչ է Հոգի՛ն, Հայու Հոգին՝ կը հարցնեմ դեռ, աւա՛ղ,
Ու կը գտնեմ զայն ցեխի մէջ կիսաթաղ . . .
Բայց զերդ զինուոր մ՚որ կը կռուի անդադար՝
Ցեխն ալ կ՚ըսեմ, զայն աղտոտել չի կրնար
Եւ ընդմէջէն իր այդ ցեխին, սարսռագին
կը համբուրեմ Հայու յոգնած , սո՛ւրբ Հոգին . . . :

GAMBITS

Gambits are conventionally accepted expressions used as tools for communication. They appear as "pre-fabricated parts" in the form of words, phrases, and sentences and are readily transferable to everyday recurrent situations. Since they play a decisive role in the organization of verbal interchanges, they must be systematically practiced, independently of their complexity, as any other unit of "active" vocabulary.

1. Greetings

Բարե՛ւ:
[Parev!]

Hello!

Ողջո՛ւյն:
[Voghjuyn!]

Hello!

Բարի՛ լոյս:
[Pari luys!]

Good morning!

Բարի՛ իրիկուն:
[Pari irigun!]

Good evening.

Բարո՛վ եկար/եկաք:
[Parov yegar/yegak!]

Welcome to you! (inform/form)

Ցտեսութի՛ւն:
[Tsədesutyun!]

See you later!

Մնաս/մնաք բարո՛վ:
[Mənas/mənak parov!]

Goodbye![1] (inform/form)

Երթաս/երթաք բարո՛վ:
[Yertas/yertak parov!]

Take care![1] (inform/form)

Գիշե՛ր բարի:
[Kisher pari!]

Good night.[2]

Լո՛յս բարի:
[Luys pari!]

Good night.[2]

---

1. Conventional exchange of salutations when guests depart *Մնաս/մնաք բարով* Goodbye! (lit.: Stay well!) and *Երթաս/երթաք բարո՛վ* Goodbye! (lit.: Leave well!)
2. Conventional exchange of expressions for *Good night*: *Գիշեր բարի Good night!* and *Լոյս բարի* Good *light!* (i.e. extending the good wishes to the next day).

1. Getting and giving personal information

Ձեր անունը/մականունը ի՞նչ է։ [Tser anunə / maganunə inch e?]	What is your name/surname? (formal)
Անունդ/մականունդ ի՞նչ է։ [Anunət/maganunət inch e?]	What is your name/surname? (informal)
Քանի՞ տարեկան ես/էք։ [Kani daregan es/ek?]	How old are you (informal/formal)?
Ձեր հպատակությունը ի՞նչ է։ [Tser həbadagutyunə inch e?]	What is your (formal) citizenship?
Քանի՞ լեզու կը խօսիս/խօսիք։ [Kani lezu gə khosis/khosik?]	How many languages do you speak? (informal/formal)
Հայերէն կը խօսի՞ս/խօսիք։ [Hayeren gə khosis/khosik?]	Do you (informal/formal) speak Armenian?
Քիչ մը։ [Kich mə]	A little.
Շատ լաւ։ [Shad lav]	Very well.
Ձեր հասցէն ի՞նչ է։ [Tser hastsen inch e?]	What is your (formal) address?
Ձեր հեռաձայնին թիւը ի՞նչ է։ [Tser heratsaynin tivə inch e?]	What is your (formal) phone number?
Ի՞նչ գործ կ'ընես/կ'ընէք։ [Inch kordz gənes/gənek?]	What is your (informal/formal) occupation?
Ի՞նչ կ'ուսանիս/կ'ուսանիք։ [Inch gusanis/gusanik?]	What do you (informal/form) study?

2a. Identifying things and persons

Ասոր ո՞վ է։ [As ov e?]	Who is this?
Ասոր պարոն/տիկին X-ն է։ [As baron/digin X-n e]	This is Mr. / Mrs. X.
Ասոր ի՞նչ է։ [As inch e?]	What is this?
Ասոր X է։ [As X e]	This is an X.
Ասոր X է, չէ՞։ [As X e, che?]	This is an X, isn't it?

Ո՛չ, աս X չէ։
[Voch, as X che]
No, this is not an X.

Հոս/հոն ի՞նչ կայ։
[Hos/hon inch ga?]
What do we have here/there?

Հոս/հոն երեք գիրք կայ։
[Hos/hon yerek kirk ga]
There are three books there.

Ուրիշ ի՞նչ կայ հոն։
[Urish inch ga?]
What else is there?

Ուրիշ ոչինչ։
[Urish vochinch]
Nothing else.

X-երէն կը խօսի՞ս/խօսի՞ք։
[X-eren gə khosik/khosis?]
Do you (informal/formal) speak X?

Ո՛չ, X-երէն չեմ խօսիր։
[Voch, X-eren chem khosir]
No, I don't speak X.

Կը հասկնամ, բայց չեմ խօսիր։
[Gə hasgənam, payts chem khosir]
I understand, but I do not speak.

Կ'ուզե՞ս/կ'ուզէ՞ք X ընել։
[Guzes/guzek X ənel?]
Would you (informal/formal) like to do X?

Ինչու՞ չէ։ Սիրով։
[Inchu che? Sirov]
Why not? With pleasure.

2b. Affirming and denying states and actions

Անշուշտ։/Հարկա՛ւ։
[Anshusht!/[Hargav!]
Of course!/Sure!

Շատ) ճիշդ է։
[(Shad) djisht e]
It is (very) true!

Յստոյգ է։
[Əstuyk e]
It is certain!

Կրնամ քեզ/ձեզ վստահեցնել։
[Gərnam tsez/kez vəstahetsənel]
I can assure you (informal/formal).

Վստահօրէն։
[Vəstahoren]
Certainly.

Սխալ է։/Ճիշդ չէ։
[Səkhal e. / Djisht che]
It is a mistake. / It is not true.

Կը սխալիս/սխալիք։
[Gə səkhalis/səkhalik]
You are wrong (informal/formal).

Այդպէս չէ։
[Aytbes che]
That's not so.

3a. Requesting something (an item or a favor)

X-ը ինձի կու տա՞ս/կու տա՞ք խնդրեմ։
[X-ə indzi gu das/gu dak khəntrem?]
Would you (informal/formal) give me the X, please?

X-ը ինձի կ'անցընե՞ս/կ'անցընէ՞ք։
[X-ə indzi gantsənes/gantsənek?]
Would you (informal/formal) pass me the X?

կրնա՞ս/կրնա՞ք ինձի X-դ/ձեր X-ը տալ։
[Gərnas indzi X-ət/tser X-ə dal?]
Can you give me your (informal/formal) X?

Հաճի՞ս/հաճի՞ք ինձի X մը բերել/տալ։
[Hadjis/hadjik indzi X mə perel/dal?]
Would you (informal/formal) be so kind as to get/give me an X?

ինձի X մը կու տա՞ս/կու տա՞ք, եթէ կարելի է։
[Indzi X mə gu das/gu dak, yete gareli e?]
Would you (informal/formal) give me an X, if possible?

կրնա՞մ X մը ունենալ։
[Gərnam X mə unenal?]
Can I have an X?

3b. Responding to a request

Ամենայն սիրով։
[Amenayn sirov]
With great pleasure.

Հրամմէ՛/հրամմեցէ՛ք։
[Hramme/hrammetsek!]
Here you (informal/formal) are!

Սիրով կ'ընեմ։
[Sirov gənem]
I will do it with great pleasure.

Մէկ վայրկեան, խնդրեմ։
[Meg vayrgyan, khəntrem]
One moment, please.

կը ցաւիմ, բայց չեմ կրնար տալ։
[Gə tsavim, payts chem gərnar dal]
I am sorry, but I cannot give it to you.

Դժբախտաբար անկարելի է։
[Təzhpakhtapar angareli e]
Unfortunately, it is impossible.

Պէտք ունիմ. ուրիշ X չունիմ։
[Petk unim; urish X chunim]
I need it; I have no other X.

4a. Asking someone's opinion

X-ը կը հաւնի՞ս/կը սիրե՞ս։
[X-ə gə havnis/gə sires?]
Do you (informal) like X?

X-ը ինչպէ՞ս է/էր։
[X-ə inchbes e/er?]
How is/was X?

X-ը ինչպէ՞ս կը գտնես/գտնէք։
[X-ə inchbes gə kədnes/kədnek?]
How do you (informal/formal) like X?

Ի՞նչ կ'ըսես/կ'ըսէք X-իս։
[Inch gəses/gəsek X-is?]
What do you (informal/formal) say about my X?

X-ը աղուո՞ր էր։
[X-ə aghvor er?]
Was X beautiful?

Չե՞ս կարծեր որ ...
[Ches gardzer vor ... ?]
Don't you think that ...

Ի՞նչ է քու կարծիքդ/ձեր կարծիքը։
[Inch e ku gardzikət/tser gardzikə?]
What is your (informal/formal) opinion?

4b. Expressing an opinion

Իմ կարծիքովս ...
[Im gardzikovəs ...]
In my opinion, ...

Ըստ իս ...
[Əst is ...]
To me, ...

Հիանալի՛ է/էր X-ը։
[Hianali e/er X-ə]
X is/was wonderful!

Հրա՛շք մըն է/էր։
[Hərashk mən e/er]
It is/was miraculous!

Սոսկալի՛ է/էր։
[Soskali e/er]
It is/was terrible!

Գէշ չէ/չէր X-ը։
[Kesh che/cher X-ə]
It is/was not bad.

Բան մը չէ/չէր։
[Pan mə che/cher]
It is/was worth nothing.

Ո՛չ, բնաւ չեմ հաւնիր։
[Voch, pənav chem havnir]
I don't like it at all.

Կը սխալիս/կը սխալիք ...։
[Gə səkhalis/gə səkhalik ...]
You (informal/formal) are mistaken, ...

Ես քեզի/ձեզի համաձայն չեմ։
[Yes kezi/tsezi hamagardzik chem]
I disagree with you (informal/formal).

Եթէ ինձի հարցնես, ...
[Yete indzi hartsənes, ...]
If you (formal) ask me, ...

Կրնայ ըլլալ, բայց...
[Gərna əllal, payts, ...]
Maybe, but ...

Շատ աղուոր է/էր X-ը։
[Shad aghvor e/er X-ə]
X is/was very beautiful.

X-ը չատ համով է/էր։
[X-ə shad hamov e/er]
X is/was very tasty.

5. Introducing oneself, family, and friends

(Եկէ՛ք) ծանօթանանք:
[(Yegek) ʤanotanank!]

Let's meet!

Անունս X է:
[Anunəs X e]

My name is X.

Իսկ ձեր անու՞նը/մականու՞նը:
[Isk ʦer anunə / maganunə?]

And your name/last name?

Իրար կը ճանչնա՞ք:
[Irar gə ʤanchnak?]

Do you know each other?

Ծանո՞թ էք իրարու:
[ʤanot ek iraru?]

Have you met?

Ծանօթացի՛ր/ծանօթացէ՛ք X-ի հետ:
[ʤanotaʦir/ʤanotaʦek X-i hed]

Meet X (informal/formal)!

Եկո՛ւր/եկէ՛ք ծանօթացնեմ:
[Yegur/yegek ʤanotaʦənem]

Come, let me introduce you (informal/formal).

Ուրախ եմ ձեզի ծանօթանալուս:
[Urakh em ʦezi ʤanotanalus]

I am pleased to meet you.

Շատ ուրախ եմ:
[Shad urakh em]

I am delighted.

Նմանապէս/նոյնպէս:
[Nəmanabes/nuynbes]

Likewise/Same here.

X-ը Y-ին ի՞նչէն է:
[X-ə Y-ın inchn e?]

How are X and Y related?

X-ը Y-ի ի՞նչը կ՚ըլլայ:
[X-ə Y-i inchə gəlla?]

What is X to Y?

Ան եղբայրս է/ընկերս է:
[As yeghpayrəs e/əngerəs e]

This is my brother/my friend.

6a. Request for information

Կրնա՞մ ձեզի/քեզի բան մը հարցնել:
[Gərnam ʦezi/kezi pan mə hartsənel?]

May I ask you (informal/formal) something?

Կրնա՞մ բան մը գիտնալ:
[Gərnam pan mə kidnal?]

May I be informed?

Ինձի կ՚ըսէ՞ս/կ՚ըսե՞ք թէ ...
[Inʤi gəses/gəsek te ...?]

Would you (informal/formal) tell me ...

Կրնա՞ս/կրնա՞ք ինձի ըսել թէ ...
[Gərnas/gərnak inʤi əsel te ...]

Can you (informal/formal) tell me ...

Գիտէ՞ս/գիտե՞ք արդեօք որ ...
[Kides/kideq artyok vor ...]
Do you (informal/formal) know that ...

Հաճի՞ս/հաճի՞ք ինձի ըսել թէ ...
[Hadjis/hadjik indzi əsel te ...]
Would you (informal/formal) be so kind as to tell me ...

Կ'ուզէի գիտնալ թէ ...
[Gouzeyi kidnal te ...]
I would like to know ...

X ի՞նչ ըսել է։
[X inch əsel e?]
What does X mean?

Ի՞նչպէս կը գրուի X-ը։
[Inchbes gə kərvi X-ə?]
How do you spell X?

Հայերէն X ի՞նչպէս կ'ըսեն։
[Hayeren X inchbes gəsen?]
How do you say X in Armenian?

X-ը ինչ՞պէս կ'արտասանուի։
[X-ə inchbes gardasanvi?]
How do you pronounce X?

Ի՞նչ է տարբերութիւնը X-ի և Y-ի միջեւ։
[Inch e darperutyunə X-i yev Y-i michev?]
What is the difference between X and Y?

Չեմ հասկնար, թէ ինչ կ'ըսես/կ'ըսէք։
[Chem hasgənar, te inch gəses/gəsek]
I do not understand what you are saying (informal/formal).

Հաճի՞ք աւելի դանդաղ խօսիլ։
[Hadjis/hadjik aveli tantagh khosil?]
Would you (informal/formal) speak a little slower?

Կրնայի՞ք արդեօք կրկնել։
[Gərnayik artyok gərgnel?]
Could you (formal) please repeat it?

6b. Responding to a request for information

(Այո՛), կը լսեմ ձեզ։
[(Ayo), gə ləsem tsez]
(Yes), go ahead.

(Այո՛), խնդրեմ։
[(Ayo), khəntrem]
(Yes), please.

(Այո՛), հրամմեցէ՛ք։
[(Ayo), hrammetsek]
(Yes), please.

Անշուշտ։
[Anshusht]
Certainly.

Սիրով։
[Sirov]
With pleasure.

Եթէ չեմ սխալիր ...
[Yete chem səkhalir ...]
If I am not mistaken ...

Վստահ չեմ, բայց ...
[Vəstah chem, payts ...]
I am not sure, but ...

կարծեմ ...
[Gardzem ...]
I think ...

կը կարծեմ, որ ...
[Gə gardzem, vor ...]
I think that ...

Իմ կարծիքովս ...
[Im gardzikovəs ...]
In my opinion ...

Որչափ որ գիտեմ, ...
[Vorchap vor kidem, ...]
As far as I know ...

7. Inquiring and reporting about one's well-being and state of health

Ինչպէ՞ս ես/էք:
[Inchbes es/ek]
How are you (informal/formal)?

Ի՞նչ կ'ընես/կ'ընէք:
[Inch gənes/gənek?]
How are you (informal/formal) doing?

Ի՞նչ ունիս/ունիք:
[Inch unis/unik?]
What's wrong with you (informal/formal)?

Լաւ եմ, չնորհակալ եմ: Իսկ դուՙն/դուՙք:
[Lav em, shənorhagal em. Isk tun/tuk?]
I am fine, thank you. And you (informal/formal)?

Լաւ ըսենք, որ լաւ ըլլանք:
[Lav əsenk, vor lav əllank]
Let's say O.K., to be O.K.

Փա՛ռք Տիրոջ, առողջ/լաւ եմ:
[Park' diroch, aroghch/lav em]
Thank God, I am healthy/well.

Դժբախտաբար այնքան ալ լաւ չեմ:
[Təzhpakhtapar aynkan al lav chem]
Unfortunately, I am not that well.

Հիւանդ/գունատ/տխուր կ'երեւիս:
[Hivant/kunad/dəkhur gerevis]
You look sick/pale/sad.

Հիւանդ եմ/չատ գէշ եմ:
[Hivant em/shad kesh em]
I am sick/very ill.

Գլուխս/ակռա(ներ)ս/ականջ(ներ)ս/
[Kəlukhəs/agṙa(ner)əs /aganch(ner)əs/
My head / my tooth/teeth, my ear(s)/

կոկորդս/ոտք(եր)ս կը ցաւի(ն):
[gogortəs/vodk(er)əs gə tsavi(n)]
my throat / my foot/feet/ache(s).

Ձեռքերս կը դողան:
[Tserkerəs gə toghan]
My hands are shaking.

Մարմինս կը դողայ:
[Marminəs gə togha]
My body is shaking.

Ճակատս/մարմինս կ'այրի։ [Djagadəs/marminəs gayri]	My forehead/my body is burning.
Սիրտս կը խառնուի։ [Sirdəs gə khaṙnəvi]	I am nauseous.
Տաքութիւն ունիմ։ [Dakutyun unim]	I have a fever.
Դող ունիմ/կը դողամ։ [Togh unim/gə togham]	I am shaking.
Կը մսիմ։ [Gə məsim]	I am cold.
Անցա՛ծ ըլլայ։ [Antsadz əlla!]	Get well!
Առողջութիւն կը մաղթեմ։ [Aṙoghjutyun gə maghtem]	I wish you good health.

8. Describing and comparing people and things, expressing preferences

Շատ լաւ կը ճանչնամ զինքը։ [Shad lav gə djanchnam zinkə]	I know him very well.
Խելացի կ'երեւի։ [Khelatsi gerevi]	He/she seems to be inteligent.
Ջայն դեռ լաւ չեմ ճանչնար։ [Zayn teṙ lav chem djanchnar]	I don't know him/her well yet.
Շատ կը յարգեմ զինքը։ [Shad gə harkem zinkə]	I have great respect for him/her.
Այդ մարդը/կինը չատ չեմ սիրեր։ [Ayt martə/ginə shad chem sirer]	I don't like that man.
Կ'ատեմ այդ անձը։ [Gadem ayt antsə]	I hate that person.
X-ը աւելի լաւ մարդ է քան Y-ը։ [X-ə aveli lav mart e kan Y-ə]	X is a better person than Y.
X-ը աշխարհի ամենալաւ մարդն է։ [X-ə ashkharhi amenalav martn e]	X is the best human in the world.
X-ը աշխարհի ամենալաւ կիներէն մէկն է։ [X-ə ashkharhi amenalav gineren megn e]	X is one of the best women in the world.
Չեմ սիրեր X ընել։ [Chem sirer X ənel]	I don't like doing X.

Շատ կը սիրեմ X *ընել։*
[Shad gə sirem X ənel]
I like doing X very much.

Շատ կը հաւնիմ այս գոյնը։
[Shad gə havnim ays kuynə]
I like this color very much.

Կը նախընտրեմ X-*ը։*
[Gə nakhəndrem X-ə]
I prefer the X.

Աս ամենասիրած X-*ս է։*
[As amenasıradz X-əs e]
This is my favorite X.

X *ընել աւելի կը սիրեմ քան* Y։
[X ənel aveli gə sirem kan Y]
I like to do X more than Y.

Նախընտրելի է X *ընել։*
[Nakhəndreli e X ənel]
It is preferable to do X.

Զիս X-*ը չատ կը հետաքրքրէ։*
[Zis X-ə shad gə hedakərkre]
X interests me very much.

Զիս X-*ը բնաւ չի յուզեր։*
[Zis X-ə pənav chi huzer]
X does not move me at all.

X-*ի հանդէպ չատ անտարբեր եմ։*
[X-i hanteb shad andarper em]
I am very indifferent to X.

Աղուէսի պէս խորամանկ է։
[Aghvesi bes khoramang e]
He/she is as sly as a fox.

Շան պէս հաւատարիմ է։
[Shan bes havadarim e]
He/she is as faithful as a dog.

Կատուի պէս երկերես է։
[Gadvi bes yergeres e]
He/she is as two-faced as a cat.

Գառնուկի պէս անմեղ է։
[Karnugi bes anmegh e]
He/she is as innocent as a lamb.

9. Discussing weather, expressing feelings related to the weather

Ի՞նչպէս է օդը։
[Inchbes e otə?]
How is the weather?

Օդը գեղեցիկ/լաւ/գէշ է։
[Otə keghetsig/lav/kesh e]
The weather is beautiful/good/bad.

Օդը կը բացուի/կը փոխուի։
[Otə gə patsvi/gə pokhvi]
The weather is clearing up/changing.

Ամպոտ/մռայլ/պայծառ օր է։
[Ambod/mərayl/baydzar or e]
It's a cloudy/dull/bright day.

Այսօր ջերմաստիճանը ի՞նչ է ։
[Aysor chermastidjanə inch e?]
What's the temperature today?

Gambits

Արեւը կը փայլի։
[Arevə gə payli]

The sun is shining.

Շատ տաք/ցուրտ/զով է։
Shad dak/tsurd/zov e]

It is very hot/cold/cool.

Օդը կիզիչ/խոնաւ է։
[Ötə gizich/khonav e]

It is scorching/humid.

Երկինքը պայծառ/ամպոտ է։
[Yerginkə baydzar / ambamadz e]

The sky is clear/cloudy.

Կ'անձրեւէ/պիտի անձրեւէ։
[Gantsreve/Bidi antsreve]

It is raining/It will rain.

Տեղատարափ անձրեւ կու գայ։
Deghadarap antsrev gu ka]

It's raining cats and dogs.

Կարկուտ կու գայ։
[Gargud gu ka]

It is hailing.

Կ'որոտայ։
[Goroda]

There is thunder.

Կը փայլատակէ։
[Gə payladage]

There is lightning.

Մշուշ է։
[Məshush e]

It's foggy.

Սաստիկ հով կայ։
[Sastig hov ga]

It is very windy.

Օդը կը փոթորկի։
[Ötə gə potorgi]

It is stormy.

Կը ձիւնէ։ / Ձիւն կու գայ։
[Gə tsyune./Tsyun gu ka]

It is snowing.

Փոթորիկ/ձիւնամրրիկ կայ։
[Potorig/tsyunamərrig ga]

There is a storm/a snowstorm.

Սառնամանիք է։
[Sarnamanik e]

It is icy cold.

Զէրոյէն X աստիճան վար է։
[Zeroyen X astidjan var e]

It is X below zero.

(Շատ) կը մսիմ։
[(Shad) gə məsim]

I am (very) cold.

(Սոսկալի) կը տաքնամ։
[(Soskali) gə daknam]

I am (terribly) hot.

Հովանոց/անձրեւանոց ունի՞ս/ունի՞ք։
[Hovanots/antsrevanots unis/unik?]

Do you (informal/formal) have an umbrella/a raincoat?

10. Inviting and responding to invitations

Կ'ուզէի ձեզ մեր տունը հրաւիրել։
[Guzeyi ʦez mer dunə hravirel]
I would like to invite you (informal/formal) to our house.

Բարեհաճեցէ՛ք վաղը մեզի այցելել։
[Parehadjeʦek vaghə mezi aytselel]
Be so kind (formal) as to visit us tomorrow.

Այս գիշեր մեզի հրամմեցէ՛ք։
[Ays kiʃer mezi hrammeʦek]
Come over (formal) to our home tonight.

Շատ գոհ պիտի մնայի, եթէ գայիք։
[Ʃhad koh bidi mənayi, yete kayik]
I would be very happy if you would come.

Ամենայն սիրով։
[Amenayn sirov]
With great pleasure!

Սիրով կու գամ։ Ո՞ր ժամին։
[Sirov gu kam. Vor ʒhamin?]
I will gladly come. At what time?

Կը ցաւիմ, բայց պիտի չկարենամ գալ։
[Gə ʦavim, payʦ bidi ch̆əgarenam kal]
I'm sorry, but I won't be able to come.

Դժբախտաբար չեմ կրնար։
[Təʒhpakhtapar ch̆em gərnar]
Unfortunately, I can't.

Հիւր ունիմ/գործ ունիմ։
[Hyur/kordz unim]
I have company/I have work to do.

Ժամանակ չունիմ։
[ʒhamanag ch̆unim]
I have no time.

Ազատ չեմ/զբաղած եմ։
[Azad ch̆em / əzpaghadz em]
I am not free/I am busy.

(Պիտի գամ) ուրիշ առիթով։
[(Bidi kam) uriʃ aritov]
(I will come) on another occasion.

11. Hosting

Բարի՛ եկար/եկաք։
[Pari yegak/yegar]
Welcome (informal/formal)!

Բարի՛ տեսանք։
[Pari desank]
Happy to see you!

Ներս հրամմէ՛/հրամմեցէ՛ք։
[Ners hramme/hrammeʦek!]
Come on in (informal/formal)!

Հաճեցէ՛ք (ներս) մտնել։
[Hadjeʦek (ners) mədnel]
Please come in! (formal)

Հաճեցէ՛ք հոս նստիլ։
[Hadjeʦek hos nəstil]
Please sit down here! (formal)

Նստեցէ՛ք, կ՚աղաչեմ։
[Nəstetsek, gaghachem]
Sit down, please. (formal)

Շատոնց է քեզ/ձեզ չեմ տեսած։
[Shadonts e kez/tsez chem desadz]
It's been a while since I've seen you (informal/formal).

Ի՞նչ կայ չկայ։
[Inch ga chəga?]
What's new?

Ի՞նչ կրնամ քեզի/ձեզի հրամցնել։
[Inch gərnam kezi/tsezi hramtsənel?]
What can I offer you (informal/formal)?

Սուրճ մը կը խմէ՞ք/կ՚առնէ՞ք։
[Surdj mə gə khəmek/garnek?]
Would you (formal) like to have some coffee?

Շաքարո՞վ/առա՞նց շաքարի։
[Shakarov?/ arants shakari?]
With sugar? Without sugar?

Կտոր մըն ալ անուշեղէն կրնա՞մ տալ։
[Gədor mən al anushegheh gərmam dal?]
Can I also give you a piece of cake?

Խմիչք/ըմպելի մը կրնա՞մ առաջարկել։
[Khəmichk/əmbeli mə gərmam arachargel?]
Can I offer you a drink?

Խորտիկներէն ալ օգտուեցէ՛ք։
[Khordigneren al oktəvetsek]
Help yourself to the appetizers!

Սիրով. չատ ազնիւ էք։
[Sirov, shad azniv ek]
Gladly, you are very kind (formal).

Կը ցաւիմ, բայց պիտի մերժեմ։
[Gə tsavim, payts bidi merzhem]
I am sorry, but I must refuse you.

Չեմ խմեր։/Կուշտ եմ։
[Chem khəmer/gusht em]
I do not drink ./I am not hungry.

Ախորժակ չունիմ։
[Akhorzhag chunim]
I have no appetite.

Անօթի (չ)եմ. ծարաւ (չ)եմ։
[Anoti (ch)em; dzarav (ch)em]
I am (not) hungry; I am (not) thursty.

Հիմա (կամացուկ մը) պիտի մեկնիմ։
[Hima (gamatsug mə) bidi megnim]
I will (quietly) take my leave now.

Շատ հաճելի երեկոյ մըն էր։
[Shad hadjeli yerego mən er]
It has been a very pleasant evening.

Արդէն կը մեկնի՞ք։
[Arten gə megnik?]
You are leaving already?

Այո՛, դժբախտաբար պէտք է երթամ։
[Ayo, təzhpakhtapar betk e yertam]
Yes, I am afraid I have to go.

Զգացուած եմ ձեր հիւրասիրութենէն։
[Ƶzkatsvadz em tser hyurasirutenen]
Thank you for your hospitality.

Նորէն հրամմեցէ՛ք։
[Noren hrammetsek!]
Come to see us again!

Դուք ալ մեզի հրամմեցէ՛ք։
[Tuk al mezi hrammetsek]
You should also visit us.

12. Planning leisure time and vacations

Այս իրիկուն/ամառ/տարի ի՞նչ պիտի ընես։
[Ays irigun / amar / dari inch bidi ənes?]
What are you (informal) doing tonight/this summer/this year?

Զատիկը/Սուրբ Ծնունդը/Նոր Տարին
[Zadigə/Surp Dzənuntə/Nor Darin]
Easter/Christmas/New Year

կը մօտենայ. ի՞նչ է ծրագիրդ։
[gə modena; inch e dzərakirət?]
is approaching; what are your plans?

Ի՞նչ միտք ունիս ընելու։
[Inch mitk unis ənelu?]
What are you planning to do?

Ի՞նչ ծրագիրներ ունիս։
[Inch dzərakirner unis?]
What kind of plans do you have?

Ո՞ւր կ՚ուզես/կը մտածես երթալ։
[Ur guzes/gə mədadzes yertal?]
Where do you want to go/think of going?

Կը փափաքի՞ս/փափաքի՞ք X ընել։
[Gə papakis/papakik X ənel?]
Would you (informal/formal) like to do X?

Կ՚ուզե՞ս տեղ մը երթալ։
[Guzes degh mə yertal?]
Do you wish to go some place?

Եկուր պարտէզ իջնենք։
[Yegur bardez ichnenk!]
Let's go down to the garden!

Ի՞նչ կը նախընտրես ընել։
[Inch gə nakhəndres ənel?]
What would you prefer to do?

Կ՚ուզեմ ընկերներս հրաւիրել։
[Guzem əngernerəs hravirel]
I would like to invite my friends.

Կը մտածեմ X երթալ/ընել։
[Gə mədadzem X yertal/ənel]
I plan to go to X/to do X.

Մասնաւոր ծրագիր մը չունիմ։
[Masnavor dzərakir me chunim]
I do not have a particular plan.

Այս տարուայ համար ծրագրեր չունիմ։
[Ays darva hamar dzərakrer chunim]
I do not have any plans for this year.

Բան մըն ալ չեմ ծրագրած։
[Pan mən al chem dzərakradz]
I haven't planned anything for this year.

Դեռ բան մըն ալ չեմ/չենք որոշած։
[Teŕ pan mən al čhem/čhenk voroshadz]
I haven't decided anything yet.

Զբաղած եմ։
[Ƶzpaghadz em]
I am busy.

Կը մտածենք քաղաքէն դուրս ելլել։
[Gə mədadzenk kaghaken turs yellel]
We plan to go out of town.

Կ'ուզեմ սփոր ընել։
[Guzem əspor ənel]
I would like to play some sports.

Լաւ գաղափար է։
[Lav kaghapar e]
Good idea!

13. Inquiring about news and reporting news

Ի՞նչ նորութիւն։
[Inch norutyun?]
What's new?

Ի՞նչ կայ չկայ։
[Inch ga čhəga?]
What's on?

Ի՞նչ(եր) լսեցիր։
[Inch(er) ləsetsir?]
What did you hear?

Ի՞նչ կը գրեն թերթերը։
[Inch gə kəren terterə?]
What are the newspapers writing?

Նոր բան մը լսեցի՞ր։
[Nor pan mə ləsetsir?]
Did you hear anything new?

Լսեցի՞ր (վերջին) նորութիւնը։
[Ləsetsir (verčhin) norutyunə?]
Have you heard the (latest) news?

Լսեցի՞ր ինչ պատահեցաւ։
[Ləsetsir inch badahetsav?]
Have you heard what happened?

Նոր լուրը իմացա՞ր։
[Nor lurə imatsar?]
Did you hear the news?

Աչքդ լո՛յս, ...
[Ačhkət luys, ...]
Congratulations, ... (Lit.: *Light to your eyes!* Expression used before breaking good news. See also p. 281.)

Ի՞նչ կ'ըսես վերջին եղածին։
[Inch gəses verčhin yeghadzin?]
What do you think about what's been happening lately?

Կերածդ, խմածդ քեզի, տեսածդ ինձի։
[Geradzət, khəmadzət kezi, desadzət indzi]
How was the party?
(Conventional informal expression, addressed to somebody who has been to a party. Lit.: *What you ate and drank is all yours, what you saw is mine.)*

14. Telling secrets and reacting to secrets

Մեր մէջ մնայ, ...
[Mer mech məna...]
It should stay between us, ...

Մէկու մը բան չըսես, ...
[Megu mə pan chəses]
Don't tell anybody, ...

Գաղտնիք մը ունիմ, մարդու չըսես։
[Kaghtnik mə unim, martu chəses]
I have a secret, don't tell anybody.

Կրնա՞ս գաղտնիք մը պահել։
[Gərnas kaghtnik mə bahel?]
Can you (informal) keep a secret?

Անշուշտ։
[Anshusht!]
Of course!

Անհոգ եղիր, հոս կը մնայ։
[Anhok yeghir, hos gə mənа]
Don't worry, it will stay here.

Կը խոստանամ լուռ մնալ։
[Gə khostanam lur mənal]
I promise to be silent.

Աստուած վկայ, մարդու չեմ ըսեր։
[Astvadz vəga, martu chem əser]
I swear to God, I won't tell anybody.

Վստահէ՛ ինծի։
[Vəstahe indzi]
Trust me!

Կ'երդնում, որ ըսածս ճիշդ է։
[Gertnum, vor əsadzəs djisht e]
I swear, what I'm saying is true.

Աչքովս տեսայ։
[Achkovəs desa]
I saw it with my (own) eyes.

Ականջովս լսեցի։
[Aganchovəs ləsetsi]
I heard it with my (own) ears.

Ես արդէն լսած էի/գիտէի։
[Yes arten ləsadz eyi/kideyi]
I had heard/I knew it already.

Աս ի՛նչ լաւ/գէշ լուր է։
[As inch lav/kesh lur e]
What good/bad news!

Հիանալի՛/սոսկալի՛ լուր է։
[Hianali/soskali lur e]
It's wonderful/terrible news!

15. Expressing surprise, doubt

Իրա՞ւ (կ'ըսես)։
[Irav (gəses)?]
Is that true (what you are saying)?

Ի՞նչ կ'ըսես, չէի գիտեր։
[Inch gəses, cheyi kider]
Really? I didn't know that.

Երբեք չէի սպասեր։
[Yerpek cheyi əspaser]
I would never have expected it to happen.

Կը զարմանամ։
[Gə zarmanam]
I am surprised.

(Մեծ) զարմանք կը պատճառէ ինծի։
[(Medz) zarmank gə badjare indzi]
It surprises me (greatly).

Որո՞ւն միտքէն կ'անցնէր։
[Vorun mitken gantsner?]
Who would have thought it!

Ջեմ կրնար ըսածիդ հաւատալ։
[Chem gərnar əsadzit havadal]
I can't believe what you are saying.

Անհաւատալի/անսպասելի է։
[Anhavadali/anəspaseli e]
It's unbelievable/unexpected.

Ջլսուած բան է։
[Chləsvadz pan e]
It's a thing unheard of.

Ո՞վ ըսաւ քեզի։
[Ov əsav kezi?]
Who told you?

Ուրկէ՞ իմացար։
[Urge imatsar?]
How did you find out?

Վստա՞հ/համոզուա՞ծ ես։
[Vəstah/hamozvadz es?]
Are you sure/convinced?

Որո՞շ գիտես։
[Vorosh kides?]
Do you know it for sure?

Պիտի ստուգեմ (թէ ճի՞շդ է)։
[Bidi əstukem (te djisht e?)]
I'm going to check it (if it's true).

16a. Asking for advice

Ի՞նչ խորհուրդ կու տաս (որ ընեմ)։
[Inch khorhurt gu das (vor ənem)?]
What would you (informal) advise me (to do)?

Ի՞նչ ընեմ արդեօք։
[Inch ənem artyok?]
What should I possibly do?

Եթէ տեղս ըլլայիր, ի՞նչ պիտի ընէիր։
[Yete deghəs əllayir, inch bidi əneyir?]
What would you do, if you were me?

X *ընեմ, թէ՞* Y *ընեմ։*
[X ənem, te Y ənem?]
Should I do X or Y?

Ի՞նչ ընելու եմ հիմա։
[Inch ənelu em hima?]
What am I to do now?

Շուարած եմ, ընելիքս չեմ գիտեր։
[Shəvaradz em, ənelikəs chem kider]

I am lost, I don't know what to do.

16b. Offering advice

Ես քու տեղդ ըլլայի՝ X կ'ընէի։
[Yes ku deghət əllayi, X gəneyi]

I would do X if I were you.

Ես X կ'ընէի. ուրիշ ելք չկայ։
[Yes X gəneyi; urish yelk chəga]

I would do X; there is no other way.

Եթէ ինծի մտիկ ընես, ...
[Yete indzi mədig ənes, ...]

If you listen to me, ...

Ես պարզապէս X կ'ընէի։
[Yes barzabes X gəneyi]

I would simply do X.

Լաւ պիտի ըլլար, եթէ X ընէիր։
[Lav bidi əllar, yete X əneyir]

You would be doing the right thing if you did X.

Աւելի լաւ չէ՞ր ըլլար, եթէ ...
[Aveli lav cher əllar, yete ...]

Wouldn't it be better if ...

Լաւագոյնը X ընելն է։
[Lavakuynə X əneln e]

The best you can do is X.

Իրաւ որ չեմ գիտեր ինչ ըսեմ։
[Irav vor chem kider inch əsem]

I really do not know what to say.

Չեմ գիտեր, դժուար հարց է։
[Chem kider, təzhvar harts e]

I don't know, it is a problem.

Եկուր ուրիշ բան մը ընենք։
[Yegur urish pan mə ənenk!]

Let's do something else.

X ընել փորձեցի՞ր։
[X ənel portsetsir?]

Did you try to do X?

16c. Taking advice

Այդպէս ալ կ'ընեմ։
[Aytbes al gənem]

I will do exactly that.

Ուրիշ ելք չկայ։
[Urish yelk chəga]

There is no other way out.

Լաւ միտք/գաղափար է։
[Lav midk/kaghapar e]

It is a good thought/idea.

Լաւ խորհուրդ է։
[Lav khorhurt e]

It is good advice.

Պիտի հետեւիմ ձեր/քու խորհուրդիդ։
[Bidi hedevim tser/ku khorhurtit]

I will follow your (informal/formal) advice.

17a. Congratulating and expressing wishes

Շա՛տ տարիներու։
[Shad darineru]
Many happy returns!

Շնորհաւո՛ր Նոր Տարի
[Shənorhavor nor dari]
Happy New Year

և Սուրբ Ծնունդ։
[yev Surp Dzənunt]
and Merry Christmas!

Կը շնորհաւորեմ նշանախօսութիւնդ։
[Gə shənorhavorem nəshanakhosutyunət]
I congratulate you on your engagement.

Կը շնորհաւորենք ձեր ամուսնութիւնը։
[Gə shənorhavorenk tser amusnutyunə]
We congratulate you on your marriage.

Կը շնորհաւորեմ պաշտօնիդ բարձրացումը։
[Gə shənorhavorem bashtonit partsratsumə]
I congratulate you on your promotion.

Բարի Կաղանդ (կը մաղթեմ)։
[Pari Gaghant (gə maghtem)]
(I wish you) a happy New Year's Day!

Կը ցանկամ երջանիկ տօներ։
[Gə tsangam yerchanig doner]
I wish you happy holidays!

Շնորհաւո՛ր տարեդարձ։
[Shənorhavor daretarts!]
Happy Birthday!

Կը մաղթեմ քաջառողջութիւն։
[Gə maghtem kachaṙoghchutyun]
I wish you good health.

Բարի ճամբորդութի՛ւն։
[Pari djamportutyun!]
Bon voyage!

Յաջողութիւն կը մաղթեմ։
[Hachoghutyun gə maghtem]
(I wish you) good luck!

17b. Special expressions used on various happy occasions

Աչքդ լո՛յս։
[Achkət luys!]
Congratulations to you! (informal)
(Lit.: *Light to your eyes!* Used on any happy occasion: engagement, marriage, birth, graduation, etc.)

Մէկ բարձի (վրայ) ծերանա՛ք։
[Meg partsi (vəra) dzeranak!]
I wish you a long life together!
(Lit.: *Grow old on the same pillow*! Used to congratulate a newlywed couple.)

Լաւ օրերը տեսնէ՛ս։
[Lav orerə desnes!]
Congratulations! (informal)
(Lit. *May you see his/her good days*! Used as a good wish with regard to someone's children.)

Անունովդ ապրի՛ս:
[Anunovət abris!]

Happy Saint's day!
(Lit.: *May you live with your name*! Said to a person who carries the name of a Saint celebrated that particular day.)

Բարի՛ ախորժակ:
[Pari akhorzhag!]

Bon appétit!

Անուշ ըլլայ:
[Anush əlla!]

Enjoy it! (Lit.: *May it be sweet*! Used both when offering food and when responding to someone's appreciation of the food just enjoyed.)

Լա՛ւ օրերու (գործածես):
[Lav oreru (kordzadzes)]

Use it in health! (Lit.:{*May you use it*} *in good days*! Used with reference to anything newly obtained.

Բարով հագնի՛ս:
[Parov haknis!]

Wear it in health!
(About new clothing)

Բարով նստի՛ք:
[Parov nəstik!

Enjoy your home! (Lit.: *Reside well*! Used on house-warmings.)

(Շա՛տ) ապրի՛ս:
[Abris!]

Good for you/Bravo! (Lit.: *May you live* {*long*}! Used in praising a good performance.)

Ձեռքերդ/ձեռքերնիդ դալա՛ր:
[Tserkerət/tserkernit talar!]

Well done! (Lit.: *May your* (informal/formal) *hands thrive*! Used in praising someone's manual skills, particularly after enjoying his/her cooking.)

18. Contacting somebody on the phone

Կը ներէ՞ք, X-ի հետ կրնա՞մ խօսիլ:
[Gə nerek, X-i hed gərnam khosil?]

Excuse me, may I speak to X?

Նոյն ինքն է խօսողը:
[(Nuyn) inkn e khosoghə]

Speaking.

Այո՛, մէկ վայրկեան:
[Ayo, meg vayrgyan]

Yes, one moment please.

Հիմա կը կանչեմ:
[Hima gə ganchem]

I will call him/her right now.

Կը ցաւիմ, բայց X-ը հոս չէ:
[Gə tsavim, payts X-ə hos che]

I am sorry, but X is not here.

Ցաւօք X-ը քաղաքէն դուրս կը գտնուի:
[Tsavok X-ə kaghaken turs gə kədnəvi]

I am sorry, X is out of town.

Ներեցէ՛ք, ո՞վ կը խօսի:
[Neretsek, ov gə khosi?]

Who is talking, please?

Մէկ ժամէն հոս կ'ըլլայ։
[Meg zhamen hos gəlla]
He/she will be back in an hour.

Կրնա՞մ իրեն լուր մը ձգել։
[Gərnam iren lur mə ʦəkel?]
May I leave him/her a message?

X-ը այլեւս հոս չ'ապրիր։
[X-ə aylyevəs hos ċhabrir]
X does not live here anymore.

Հասցէն/հեռաձայնին թիւը կ'ուզէ՞ք։
[Hasʦen/heŕaʦaynin tivə guzek?]
Would you like to have his/her address/ telephone number?

Այո՛, եթէ կարելի է։
[Ayo, yete gareli e]]
Yes, if it is possible.

Սխալ թիւ ունիք։
[Səkhal tiv unik]
You have the wrong number.

19. Expressing regret, asking for forgiveness, and pardoning

(Շատ) կը ցաւիմ։
[(Sẖad) gə ʦavim]
I am (very) sorry.

Մե՛ղք։
[Megẖk]
What a pity!

Ցաւալի է։
[ʦavali e]
It is regrettable.

Ներողութիւն կը խնդրեմ։
[Neroghutyun gə kẖəntrem]
I ask for forgiveness.

Ներողամիտ եղէ՛ք։
[Neroghamid yeghek]
Be forgiving.

Ներուած ես/էք։
[Nervaʤ es/ek]
It's O.K.
(Lit.: *You* (informal/formal) *are forgiven.*)

Կ'աղաչեմ։
[Gaghaċhem]
I beg you.

Հոգ չէ։
[Hok ċhe]
It doesn't matter.

Խնդիր չէ։
[Kẖəntir ċhe]
It's not a problem.

20. Expressing gratitude and responding

Շնորհակալութի՛ւն։
[Sẖənorhagalutyun]
Thanks!

Ջ'արժեր։
[Ċharzher]
You are welcome!

(*Սրտանց*) *չնորհակալ եմ*։
[(Sərdanʦ) ʃhənorhagal em]

Thank you (wholeheartedly).

(*Շատ*) *երախտապարտ եմ* (*քեզի/ձեզի*)։
[(Ʃhad) yerakhdabard em (kezi/(ʦezi)]

I am (very) grateful (to you) (informal/formal).

Երբեք պիտի չմոռնամ ըրածդ/ձեր ըրածը։
[Yerpek bidi chəmornam əradzət/ʦer əradzə]

I will never forget what you (informal/formal) did.

Շատ ուրախ եմ որ օգտակար եղայ։
[Ʃhad urakh em vor okdagar yegha]

I am happy that I could be of help.

Շատ ազնիւ էք։
[Ʃhad azniv ek]

You (formal) are very kind.

Քա՛ւ լիցի։
[Kav liʦi]

Not at all!

Ոչի՛նչ, բան մը չէ։
[Vochinch, pan mə che]

Do not mention it!

CONJUGATION OF REGULAR VERBS
INDICATIVE MOOD (Affirmative)

First Conjugation verbs in -ել		Second Conjugation verbs in -իլ	Third Conjugation verbs in -ալ
PRESENT			
(ես)	կը վազեմ	կը խօսիմ	կը կարդամ
(դուն)	կը վազես	կը խօսիս	կը կարդաս
(ան)	կը վազէ	կը խօսի	կը կարդայ
(մենք)	կը վազենք	կը խօսինք	կը կարդանք
(դուք)	կը վազէք	կը խօսիք	կը կարդաք
(անոնք)	կը վազեն	կը խօսին	կը կարդան
IMPERFECT			
(ես)	կը վազէի	կը խօսէի	կը կարդայի
(դուն)	կը վազէիր	կը խօսէիր	կը կարդայիր
(ան)	կը վազէր	կը խօսէր	կը կարդար
(մենք)	կը վազէինք	կը խօսէինք	կը կարդայինք
(դուք)	կը վազէիք	կը խօսէիք	կը կարդայիք
(անոնք)	կը վազէին	կը խօսէին	կը կարդային
AORIST			
(ես)	վազեցի	խօսեցայ	կարդացի
(դուն)	վազեցիր	խօսեցար	կարդացիր
(ան)	վազեց	խօսեցաւ	կարդաց
(մենք)	վազեցինք	խօսեցանք	կարդացինք
(դուք)	վազեցիք	խօսեցաք	կարդացիք
(անոնք)	վազեցին	խօսեցան	կարդացին
PERFECT 1			
(ես)	վազած եմ	խօսած եմ	կարդացած եմ
(դուն)	վազած ես	խօսած ես	կարդացած ես
(ան)	վազած է	խօսած է	կարդացած է
(մենք)	վազած ենք	խօսած ենք	կարդացած ենք
(դուք)	վազած էք	խօսած էք	կարդացած էք
(անոնք)	վազած են	խօսած են	կարդացած են
PERFECT 2			
(ես)	վազեր եմ	խօսեր եմ	կարդացեր եմ
(դուն)	վազեր ես	խօսեր ես	կարդացեր ես
(ան)	վազեր է	խօսեր է	կարդացեր է
(մենք)	վազեր ենք	խօսեր ենք	կարդացեր ենք
(դուք)	վազեր էք	խօսեր էք	կարդացեր էք
(անոնք)	վազեր են	խօսեր են	կարդացեր են

PLUPERFECT 1

(ես)	վազած էի	խօսած էի	կարդացած էի
(դուն)	վազած էիր	խօսած էիր	կարդացած էիր
(ան)	վազած էր	խօսած էր	կարդացած էր
(մենք)	վազած էինք	խօսած էինք	կարդացած էինք
(դուք)	վազած էիք	խօսած էիք	կարդացած էիք
(անոնք)	վազած էին	խօսած էին	կարդացած էին

PLUPERFECT 2

(ես)	վազեր էի	խօսեր էի	կարդացեր էր
(դուն)	վազեր էիր	խօսեր էիր	կարդացեր էիր
(ան)	վազեր էր	խօսեր էր	կարդացեր էր
(մենք)	վազեր էինք	խօսեր էինք	կարդացեր էինք
(դուք)	վազեր էիք	խօսեր էիք	կարդացեր էիք
(անոնք)	վազեր էին	խօսեր էին	կարդացեր էին

FUTURE I

(ես)	պիտի վազեմ	պիտի խօսիմ	պիտի կարդամ
(դուն)	պիտի վազես	պիտի խօսիս	պիտի կարդաս
(ան)	պիտի վազէ	պիտի խօսի	պիտի կարդայ
(մենք)	պիտի վազենք	պիտի խօսինք	պիտի կարդանք
(դուք)	պիտի վազէք	պիտի խօսիք	պիտի կարդաք
